ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿԱՀԻՐԵՈՒՄ ՆՇՎԵՑ ՇԵՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԸ

Սույն թվականի նոյեմբերի 9-ին Կահիրեում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն՝ նվիրված Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ Պատրիարքի գահակալության երեսունամյակին: Այս առիթով Կահիրե էր ժամանել Արամ Ա Կաթողիկոսը: Նորին Սրբության շքախմբին մաս էին կազմում Վարդան արքեպս. Դեմիրճյանը և Նարեկ ծ. վրդ. Ալեմեզյանը:

Կահիրե էին ժամանել նաև Անտիոքի Պատրիարք Մար Իգնատիոս Զաքքա Իվասը, Էրիթրիայի Փիլիպոս Ա Պատրիարքը, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պետրոս Ը Պատրիարքի փոխանորդը, Ղպտի կաթոլիկ Պատրիարք Ստեփանոս Բ-ն, Մերձավոր Արևելքի Եկեղեցիների խորհրդաժողովի նախագահ վեր. դոկտ. Ջարջուրը, Մերձավոր Արևելքի Ավետարանական Եկեղեցիների սինոդի նախագահը ու Եգիպտոսի Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոսը, Եգիպտոսի Ղպտի Ավետարանական Եկեղեցու ազգապետը, պապական նվիրակն ու այլ հյուրեր:

Նոյեմբերի 9-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Աբբասիեի Անբա Ռուեյս վանքի Ս. Մարկոսի Մայր Տաճարում տեղի ունեցավ գահակալության 30-ամյակի տոնակատարությունը: Խոսք ասացին հյուր Պատրիարքները և բարձր գնահատեցին Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքի բազմարդյուն գործունեությունը:

Շենուդա Գ-ի գահակալության շրջանում Ամբա Ռուեյսի վանքում հաստատված տպարանում լույս են տեսել հարյուրավոր հոգևոր բնույթի և մեկնողական գրքեր: Իսկ արտասահմանում գնվել կամ կառուցվել են ավելի քան հարյուր եկեղեցիներ և հիմնվել առաջնորդարաններ: Բանախոսներից յուրաքանչյուրի խոսքը ընդմիջվում էր հինգից վեց հազար հավատացյալների որոտընդոստ ծափերով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական գիրն ընթերցեց եգիպտահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Զավեն արքեպիսկոպոսը (տե՛ս էջ 40) և հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի Շենուդա Գ Պատրիարքին հանձնեց ընկուզենու փայտի վրա փորագրված կես մետր բարձրությամբ հայկական ոճով գեղեցիկ մի խաչքար:

Հաջորդ օրը, կեսօրին, Ապպայիսե թաղամասի Ամբա Ռուեյս աթոռանիստ պատրիարքարանում Նորին Ամենապատվություն, Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Ղպտի Ողղափառ Պապ և Պատրիարք Շենուդա Գ-ի գահակալության 30-ամյակի առթիվ կազմակերպվեց հանդիսավոր ընդունելություն, ուր Շենուդա Գ Պատրիարքն հանդիսության մասնակիցներին հիշատակի նվերներ հանձնեց:

Նոյեմբերի 11-ին, կիրակի օրը, ժամը 9.30-ին, Կահիրեի Ղանրա թաղամասի Ս. Կույս Աստվածածին Ասորի Ողղափառ եկեղեցում տեղի ունեցած արարողություններին նախագահեց Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Մար Իգնատիոս Զաքքա Իվասը: Տեղի ունեցավ Ս. Պատարագ, որի ընթացքում Սրբազան Պատրիարքը քարոզ խոսեց: Սույն արարողություններին ներկա էր Գերշ. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: Ավարտից հետո տեղի ունեցած ընդունելության ժամանակ Սրբազան Հայրը Մար Իգնատիոս Զաքքա Պատրիարքին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները և բարեմաղթանքները: